

Ք.Երևան

19 հուլիսի 2011թ.

Ժ.11.00

Մասնակցում էին Երևանի ավագանու 38 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը: Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Առաքելյանը, քաղաքապետի գլխավոր խորհրդական Դ.Մելքոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Ստեփանյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Շ. Սարգսյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ջ. Առաքելյանը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ. Գևորգյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետկապերի վարչության պետ Ա. Գևորգյանը, աշխատակազմի կազմակերպական վարչության պետի ժ/պ Ի. Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Մկրտչյանը:

Հիմք ընդունելով Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Գուրգեն Գասպարյանի 18.07.2011թ. հ.54/11-36 գրությունը՝ Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանն առաջարկեց Երևանի քաղաքապետի 2011 թվականի «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու արտահերթ նիստ գումարելու մասին» հ.3105-Ա որոշման 13-րդ կետը՝ «Երևան համայնքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևանի ավագանու իրավական ակտի նախագիծը հանել քննարկումից:

#### ՕՐԱԿԱՐԳ

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:
2. «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Գումար հատկացնելու մասին:
4. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 9-ի N2925-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

5. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 11-ի N3011-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

6. Երևանի քաղաքային տրանսպորտի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համաձայնագիրը հաստատելու մասին:

7. «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին:

8. Գույք նվիրելու մասին:

9. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օտարելու մասին:

10. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

11. Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:

12. Երևան քաղաքի սեփականությունը համարվող օժանդակ տարածքն անհատույց օտարելու մասին:

13. Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին:

14. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը /կցակառույցը/ նվիրելու մասին:

15. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

16. Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքը և դրա զբաղեցրած հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

17. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 30-ի N2814-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

18. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 24-ի N2705-Ա որոշմանը համաձայնություն տալու և «Էրեբունի» պատմահնագիտական-արգելոց թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

19. ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Մանկու-Պետերբուրգի Կառավարության միջև 2011-2014թթ. առևտրատնտեսական, գիտա-տեխնիկական, հումանիտար համագործակցության ծրագիրը հաստատելու մասին:

**1.ԼՍԵՑԻՆ**-Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-1.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված.

- 1) Եկամուտների գումարն ավելացնել 1,208,244.2 հազար դրամով,
- 2) ծախսերի գումարն ավելացնել 1,208,244.2 հազար դրամով:

2.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված NN1,2,3,6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-5 հավելվածների /կցվում է/:

3.Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում մինչև 1,208,244.2 հազար դրամ հատկացնել՝ «Երևան» հիմնադրամին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 38  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**2.ԼՍԵՑԻՆ** –«Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-1.«Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 1200 հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել 30,000.0 հազար դրամով՝ այն սահմանելով 31,000.0 հազար դրամ, որից հետո հասարակ (սովորական) բաժնետոմսերի ընդհանուր թիվը կդառնա 1240, յուրաքանչյուրը՝ 25000.0 դրամ արժողությամբ:

2.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված.

- 3) Ծախսերի գումարն նվազեցնել 30,000.0 հազար դրամով,
- 4) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը նվազեցնել 30,000.0 հազար դրամով:

3. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի միջոցների հաշվին «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշմամբ հաստատված NN2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-6 հավելվածների /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**3.ԼՍԵՑԻՆ** - Գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**- Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 13,167.6 հազար դրամ Երևան քաղաքի ենթակայության դպրոցներին՝ «Աշակերտի օրագիր» և «Առաջին դասարանցու օրագիր» հրատարակությունների որոշ խմբաքանակներ ձեռքբերելու նպատակով օժանդակություն տրամադրելու համար բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**4.ԼՍԵՑԻՆ**–Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 9-ի N2925-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 9-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 27-ի N2121-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N2925-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**5.ԼՍԵՑԻՆ**–Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի N3011-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 11-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի «Մի շարք առևտրային կազմակերպությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները, դրանց կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N983-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N3011-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 38  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**6.ԼՍԵՑԻՆ**–Երևանի քաղաքային տրանսպորտի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համաձայնագիրը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ**–Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Արտակ Ավետիսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Ասիական Զարգացման Բանկի միջև 2011 թվականի մայիսի 19-ին կնքված Երևանի քաղաքային տրանսպորտի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համաձայնագիրը /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 38  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**7.ԼՍԵՑԻՆ**–«Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ստեղծելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է.Ներսիսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Ստեղծել «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

2.Սահմանել «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը՝ 1000 հազ. դրամ:

3.Հաստատել «Երևան Տրանսպորտ Օփերեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել պետական գրանցումը և ընկերության հիմնադրի՝ օրենքով սահմանված մյուս լիազորությունների իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**8.ԼՍԵՑԻՆ**– Գույք նվիրելու մասին:

**ՋԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա.Մկրտչյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Թույլատրել Երևանի քաղաքապետին «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշռում ընդգրկված առանց հաշվեկշռային արժեքի 2 հատ Պենտիում-3 համակարգիչները նվիրել ՀՀ «Արցախյան պատերազմի մասնակից կանանց» հասարակական կազմակերպությանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**9.ԼՍԵՑԻՆ**–Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օտարելու մասին:

**ՋԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**- Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Արմենակյան փողոցի հ.225 հասցեում գտնվող շինությունները՝ եկեղեցի /480.0քմ./, օժանդակ շինություն /50.0քմ./, պարիսպ /56.5քմ./, դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 6170.57քմ. մակերեսով հողամասը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 12.07.2007թ. հ.2342890 վկայական/ անհատույց օտարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**10.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.53 շենքի 12-րդ հարկի հ.60` մեկ սենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 10.12.2007թ. հ.2539023 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սուրեն Ղազարյանին և Արման Ղազարյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**11.ԼՍԵՑԻՆ**–Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 4-րդ հարկի 72.0քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 /երկու/ տարի ժամկետով տրամադրել «Աթուռ» Հայաստանի աստրական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**12.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի սեփականությունը համարվող օժանդակ տարածքն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Մոլդովական փողոցի հ.29/5 շենքի հ.101 օժանդակ տարածքը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 25.06.2008թ. հ.2556503 վկայական/ անհատույց օտարել /նվիրել/ Մարիամ Էդուարդի Հովհաննիսյանին /անձնագիր՝ AE0218242, տրված 05.02.1999թ. 011-ի կողմից/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 38  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**13.ԼՍԵՑԻՆ**–Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 140.0քմ մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով 7 /յոթ/ տարի ժամկետով տրամադրել քաղաքացի Արմեն Մուրադյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 38  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**14.ԼՍԵՑԻՆ**– Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը /կցակառույցը/ նվիրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.05.2008թ. հ.2518602 վկայական) Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցները նվիրել կից հավելվածում նշված քաղաքացիներին՝ իրենց կողմից օգտագործվող մակերեսներին համապատասխան:

2.Սահմանել, որ Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի (կցակառույցի) նվիրաբերվող մակերեսները ենթակա են վերջնական ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**15.ԼՍԵՑԻՆ**– Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Տալ համաձայնություն՝ քաղաքացի Անուշ Վարանցովյանի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.27/8 հասցեում գտնվող 214.7քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 08.11.2010թ. հ.2650451 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.21 հասցեին հարող տարածքում գտնվող 214.7քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**16.ԼՍԵՑԻՆ**– Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքը և դրա զբաղեցրած հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա.Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Անդրանիկի փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության 731.6քմ մակերեսով տարածքը և դրա զբաղեցրած 1392.46քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 30.05.2011թ. հ.2768763 վկայական/ վարձակալության իրավունքով 5 /հինգ/ տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

2.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝

1) տրամադրվող տարածքի 1 /մեկ/ քառակուսի մետրի համար տարեկան վարձավճար սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ.

2) տրամադրվող հողամասի 1 /մեկ/ քառակուսի մետրի համար տարեկան վարձավճար սահմանել հողամասի կադաստրային արժեքի 5 /հինգ/ տոկոսի չափով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**17.ԼՍԵՑԻՆ**–Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 30-ի N2814-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ.Մովսեսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 30-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N2814-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**18.ԼՍԵՑԻՆ**–Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 24-ի N2705-Ա որոշմանը համաձայնություն տալու և «Էրեբունի» պատմահնագիտական-արգելոց թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ.Մովսեսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**-1.Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 24-ի «Երևան համայնքին փոխանցված «Էրեբունի» պատմահնագիտական-արգելոց թանգարան պետական ոչ առևտրային կազմակերպությունը համայնքային կազմակերպության վերակազմակերպելու, վերակազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր կազմելու և փոխանցման ակտը հաստատելու մասին» N2705-Ա որոշմանը:

2.Հաստատել «Էրեբունի» պատմահնագիտական-արգելոց թանգարան համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 38**  
**դեմ – 0**  
**ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**19.ԼՍԵՑԻՆ**–ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ-Պետերբուրգի Կառավարության միջև 2011-2014թթ. առևտրատնտեսական, գիտա-տեխնիկական, հումանիտար համագործակցության ծրագիրը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ.Գևորգյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ**-Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Լևոն Իգիթյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**- Հաստատել 2011 թվականի հուլիսի 7-ին ստորագրված ՀՀ Երևանի քաղաքապետարանի և ՌԴ Սանկտ-Պետերբուրգի կառավարության միջև 2011-2014թթ. առևտրատնտեսական, գիտա-տեխնիկական, հումանիտար համագործակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 38  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**